Արձանագրություն N 2

ՀՀ վերահսկիչ պալատին անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ եղանակով ձեռքբերումը ապահովող հանձնաժողովի նիստի

23.12.2015թ.
Ժամը՝ 15^{00}

Մասնակցում էին՝

Ն.Սահակյանը (հանձնաժողովի նախագահ), Գ.Զոհրաբյանը (հանձ-ի քարտուղար),,Դ. Ղազարյանը, Է. Գյոժգյանը (հանձնաժողովի անդամներ):

Հանձնաժողովի նիստին մասնակցում էր նաև «Յուքոմ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Հայկ Եսայանը:

Օրակարգ՝

1. «ՀՀՎՊ-ՇՀԾՁԲ-15/1» ծածկագրով համաձայնագրի շրջանակներում 2017թ.համար ինտերնետային կապի և հոստինգ ծառայության գնման ընթացագարգի կապակցությամբ հայտ ներկայացրած ընկերությունների գնային առաջարկների մասին

Զեկուցող՝Գ. Զոհրաբյան

Օրակարգը հաստատվեց միաձայն

Զեկուցողը նշեց, որ 23.12.16թ.-ին «ARMEPS.AM» կայքով, «ՀՀՎՊ-ՇՀԾՁԲ-15/1» ծածկագրով (2չափաբաժնով), ՀՐԱՎԵՐԻ կապակցությամբ, հայտ են ներկայացրել «Ղ-Տելեկոմ»,«ԱրմենՏել» և ՓԲԸ-ները և «Յուքոմ» ՍՊԸ, որոնց ներկայացված պահանջներին: Ընդ որում, 2-րդ չափաբաժնով՝հոստինգ ծառայություն, գնային առաջարկ էներկայացրել միայն «Յուքոմ» ՍՊԸ, որը մոտ 25 անգամ գերազանցում է այդ գնումը կատարելու նախատեսված գումարի չափը:

1-ին չափաբաժնով Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները. «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ՝450000դ.(չորս հարյուր հիսուն հազար), «Յուքոմ» ՍՊԸ՝ 601200(վեց հարյուր մեկ հազար երկու հարյուր), իսկ «ԱրմենՏել» ՓԲԸ՝994800(ինը հարյուր ինսունչորս հազար ութ հարյուր) :

2-րդ չափաբանի կապակցությամբ «Յուքոմ» ՍՊԸ լիազոր ներկայացուցչին առաջարկվեց, եթե հնարավոր է գինը իջեցնել և հասցնել նվազագույնի, սակայն այն բավարարվեց մասամբ, որը հանձնաժողովի կողմից չնդունվեց:

Հանձնաժողովը Որոշեց՝

1.ԿԱՐԳԻ 44-րդ կետի «զ» ենթակետի համաձայն, 2-րդ չափաբաժնով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած (կցվում է):

2. 1-ին չափաբաժնով, որպես նվազագույն գին ներկայացնողի, առաջին տեղը զբաղեցնող համարել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ, իսկ 2-րդ տեղը՝ «Յուքոմ» ՍՊԸ:

2. Հաստատել 1-ին տեղը զբաղեցնողի հետ կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը:

3. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին.

ա/ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ և «Յուքոմ» ՍՊԸ մասին անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար հարցում ուղարկել ՀՀ ֆիննախի համապատասխան ծառայությանը,

բ/հարցման դրական պատասխանը ստանալուն պես 1-ին և 2-րդ տեղերը զբաղեցնողներին իրազեկել այդ մասին, միաժամանակ, կայքում տեղադրել հաստատված վերոնշյալ հայտարարությունը,

գ/ անգործության ժամկետն ավարտվելուն պես կնքվելիք պայմանագրի նախագիծը էլփոստով ուղարկել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ և ընկերության կողմից կնիքված պայմանագիրը ներկայացնել հաստատման:

4. Հանձնարարել հանձնաժողովի անդամ Դ. Ղազարյանին կնքված պայմանագրը և դրա մասին հայտարարությունը տեղադրել սահմանած կայքերում:

Որոշումն ընդունվել է միաձայն

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ. Զոհրաբյան

Դ. Ղազարյանը

Է. Գյոժգյան